Արձանագրություն N 4
«ԵՔ-ԳՀԾՁԲ-20/39» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստ

ք. Երևան

05.02.2020թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Բալասանյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մուկուչյան /գնահատող/, Է. Ղազարյան /գնահատող/, Մ. Ջալաթյան /բացող/, Մ. Շահինյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/39» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող բանակցությունների մասին

(Դ. Բալասանյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/39» ծածկագրով գնման ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն գների նվազեցման շուրջ անցկացվող միաժամանակյա բանակցություններին ծանուցված մասնակիցներից ներկայացել են «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ն, «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն և «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն:

1.2 Բանակցությունների համար սահմանվել է տասնհինգ րոպե ժամանակ: Մասնակիցների կողմից սահմանված ժամանակում 1-4-րդ չափաբաժինների մասով ներկայացվել են նոր գնային առաջարկներ:

Բանակցությունների արդյունքում

«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով իր կողմից առաջարկված գինը նվազեցրեց 170000 /մեկ հարյուր յոթանասուն հազար դրամով/, որը կազմեց 160000 /մեկ հարյուր վաթսուն հազար/,«Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն 3-րդ չափաբաժնի մասով իր կողմից առաջարկված գինը նվազեցրեց 19000 /տասնինը հազար դրամով/, որը կազմեց 131500 /մեկ հարյուր երեսունմեկ հազար հինգ հարյուր/, 4-րդ չափաբաժնի մասով իր կողմից առաջարկված գինը նվազեցրեց 1600 / հազար վեց հարյուր դրամով/, որը կազմեց 7990 /յոթ հազար ինը հարյուր իննսուն/:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	«Վարազդատ Սահակյան» Ա/Ձ	«Անուշ Պետրոսյան» Ա/Ձ	«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ	«Սեգ» ՍՊԸ
		Ընդհանուր գին ԱԱՀ չի վճարում	Ընդհանուր գին ԱԱՀ չի վճարում	Ընդհանուր գին ԱԱՀ չի վճարում	Ընդհանուր գին ԱԱՀ չի վճարում
1	Համակարգչի և մոնիտորի վերանորոգում և սպասարկում	-	-	-	382900

2	Լազերային և թանաքաշիթային տպիչների վերանորոգում և սպասարկում: Պատճենահանող սարքի և տպիչների վերանորոգում և սպասարկում (քարտրիջների լիցքավորում)	170000	168000	160000	-
3	Օդորակիչների վերանորոգում	-	131500	-	-
4	Լազերային և թանաքաշիթային տպիչների վերանորոգում և սպասարկում: (քարտրիջների լիցքավորում)	-	7990	-	-

2. «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/39» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Դ. Բալասանյան)

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Սեգ» ՍՊԸ	Բավարար
«Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ	Բավարար
«Անուշ Պետրոսյան» Ա/Ձ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/39» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի որոշման մասին

(Դ. Բալասանյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/39» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Սեգ» ՍՊԸ-ին, 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Մագիստրալ նախագիծ» ՍՊԸ-ին,իսկ 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ին որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Դ. Բալասանյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝
Երևանի քաղաքապետարանի կարիքների համար **համակարգչային սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծառայությունների** ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակիցներին:

4.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

4.3 Անգործության ավարտից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագրերի նախագծերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Դ. Բալասանյան

Նախագահ՝ _____

_____ Ն. Մուկուչյան

_____ Է. Ղազարյան

Անդամներ՝ _____ Մ. Ջալաթյան

_____ Մ. Շահինյան

Համակարգող՝ _____ Ս. Եղիազարյան